

ԱՆՏՈՒՆԻ

ԿԱՐՄԻՐ
ԴՐՈՇԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ)

Թ Ի Յ Լ Ի Ս

1926

391.99

Ա - 62

19 NOV 2010

831.99 36048 62
1h-6k

Гуляев 2070

[illegible]

ԿԱՐՄԻՐ

ԴՐՈՇԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ)

● ● ● ● ● ● ● ● ● ●

൪ ൨ ൩ ൨ ൮

Տպարան Գուղարկերացոցի, Ակադ. Ծերեթեկի փ. № 3.

36048-62



13 02 2013 75573

Նվիրում եմ բոլոր նրանց, վորոնց համար
գաղափարը սրբություն է, իսկ հանուն
գաղափարի մահը — յեղանկություն:

* * *

Կոմյերիտ Վիկտորը յերեկոյան վերադարձավ ժողովից և ուղղակի մտավ հոր՝ Զուրաբովի գրասենյակը, վորտեղ նա կարգում էր ընկ. Յարոսլավսկու գեկույցը «Կուսակցական ետիկայի մասին» «Իզվեստիա» լրագրում:

Վիկտորը ձեռքում բռնած մետաքսե կարմիր կտորը բաց արավ և դիմելով հորը, հարցրեց.

— Հայրիկ, տէս, սա լինելու յէ մեր դրոշը, և ընկերներս հանձնարարեցին ինձ՝ դրա վրա նկարել Լենինի մեծագիր պատկերը: Ի՞նչ խորհուրդ կրտաս դու, — ի՞նչ գիրքով նկարեմ:

Զուրաբովը պայծառ աչքերի հիասքանչ արտահայտությամբ նայեց վորդու վոգեշունչ դեմքին, մեղմիվ շոյեց նրա շագանակագույն գանգուրները, վորից հետո հանգիստ հնչեց նրա թավ բասը.

— Լենինի բոլոր պատկերներից ամենից բնորոշն այն է, վորտեղ նա, ձեռները հենած ամպիոնի ճաղերին, խոսում է մասսայի հետ: Այդտեղ Իլիչը մարմնացած վոգևորություն է, իսկ նրա ամեն մի խոսքը հրեղեն կայծ, վոր հրդեհ

ե ձգում ունկնդիրներին սրտում: Յեւ կիսակուսած նրա զիրքը, թեթև հետ ձգած բարձր, հպարտ գլխով, այնպիսի տպավորութիւն է թողնում, կասես, նա պատրաստվում է առաջ նետվելու, իր հետ տանելու վճռականութեամբ նաև երեքտրականացած այդ հոծ բազմութիւնը: Իմ կարծիքով, ջահել կոմմունիստներին համար, վորոնց վաղը մենք պիտի գիշենք մեր տեղն ու զիրքը, ամենից հարմարն այդ նկարը — Լենինյան այդ մրրիկն է:

Վերջին խոսքերի հետ նա պատանի Վիկտորին դարձրեց դեպի այդ պատկերը, վոր կախված էր գրասեղանին հակադիր պատից և շարունակեց. —

— Լավ նայիր, Վիկտոր, տես, զա հեղափոխական տիպի իսկական մարմնացումն է:

Վիկտորը հափշտակված հետաքրքրութեամբ գիտում էր Լենինի հրացայտ արտահայտութիւնը, բռնկված ու տարված նրա հզոր ելութեամբ:

Նրան այդ ինքնամոռացումից հանեց հայրը, հարցնելով.

— Կրակոտ իմ մանչուկ, իսկ դու գիտես արդո՞ք, թե վորտեղից է սկիզբն առնում մեր Կարմիր Դրոշմ:

— Ի հարկե գիտեմ, հայրիկ. Փրանսիական Մեծ Հեղափոխութիւնից:

— Վո՛չ, Վիկտոր, վո՛չ. այդտեղից չէ:

Հապա վորտեղից է:

— Դե ականջ դիր, կարգամ քեզ Կարմիր Դրոշի մասին այն լեզենդը, վոր ժնեում ուսանող ժամանակս յես գրի յեմ առել մի վոսկերիչ ծերունի բանվորից: Ահա.

«Փրանսիական Մեծ Հեղափոխութիւնից շատ տարիներ առաջ, Լիոն քաղաքից վո՛չ հեռու, կանաչ բլուրի գագաթին, հպարտ թառել էր դը-Կոնտի Սպիտակ դոյակը՝ իր յերկնածիզ աշտարակներով, շրջապատի տափաստանից բարձր ու վեհաշուք: Նոճիներով շարված խճուղին դոյակից իջնում էր դեպի հովիտը, վորտեղ թթենիների ընդարձակ անտառում, կարմիր աղյուսե ցանկապատի մեջ, կանգնել էր դը-Կոնտի մետաքսի գործարանը: Այդտեղ հարյուրավոր կին ու տղամարդ, աղջիկ ու տղա, անդուլ աշխատանքի մաշուկ չարքաշութեամբ, պատրաստում էին նուրբ, զուսագեղ մետաքսի կտորներ, վորոնց մենաշնորհ տերն էր դը-Կոնտը Լիոնի ամբողջ շրջանում:

Աբբեշումի արդյունաբերութիւնը դը-Կոնտին տալիս էր այնպիսի խոշոր յեկամուտ, վորին նախանձել կարող էր միջնադարի ամենահարուստ ֆեոդալը, Հնդկաստանի շքեղափառ ուռլին, Չինաստանի ամենափարթամ մանդարինը: Յեւ վորքան մեծանում էին դը-Կոնտի վոսկու շեղջերը, այնքան ավելի յեր նա հարստահարում իր աշ-

խատավորներին, այնքան ավելի յեր նրա մեջ բորբոքվում նրանց շահագործելու կիրքը, նրանց անտաբերության վերջին կաթիլը ծծելու անգուսպ ցանկությունը:

Մետաքսի գործարանը հսկայական մի սարգոստայն եր, բանվոր-բանվորուհիները նրա մածուցիկ թելերում խճճված ճանճեր եյին, դր-կոնար՝ մի խոշոր սարգ, վոր քամում եր նրանց կյանքի հյուսթը և դեն շարտում կմաղքացած մարմինը:

Մետաքսի գործարանն, իր քայքայիչ աղղկ-ցությամբ, դառնաշունչ մի խորշակ եր, վոր դուրս եր գալիս դր-կոնարի քաբացած կրծքից և իր ավերիչ հեքով մահ եր բերում դժոխային պայմաններում այնտեղ մի կտոր ցամաք հաց վաստակող պրոլետարներին:

Ու քանի՛, քանի՛ ջահել, առողջ տղամարդիկ, քանի՛ չքնաղ, դեռատի կին ու աղջիկ, մետաքսի բարակ թելերի մանվածքի մեջ թողնելով իրենց աչքի լույսը, արյուն թքելով, մեռնում եյին գետնափոր խնամվ խրճիթներում, դիակների պես հյուժված, ամեն բանից գուրկ, ամեն բանի կտրոտ...

Այս թշվառների գթազերս դիմումները դր-կոնարին՝ փշրվում եյին ապակե անոթի պես, դարնվելով նրա սրտի ապառաժ քարին: Դա ավելի ևս զրգուում եր նրա գազանային անկարեկցու-

թյունը. նա դառնում եր ավելի դաժան և սլափափա եր՝ ճիճուների պես տրորելու այն «լիբբ ըմբոստներին», վորոնք համարձակվում եյին հիշեցնել նրան իրենց անտանելի կացության մասին:

Տարիները գալիս, գլորվում եյին իրար հետե-վից, ավելացնելով դր-կոնարի վոսկու շեղջերը, հուշակելով նրա Սպիտակ գլյակի փարթամ նիստ ու կացը: Իսկ ներքեում, հովտի մեջ, մետաքսի գործարանից քիչ հեռու, որ ավուր շատանում, խտանում եյին բանվորների գերեզմանատան անշուք հողաթմբերը:

* * *

Արևի վոսկեհուռ գունդն ակոսելով յերկնա-կամարի արծաթալագուր մովը, մոտենում եր միջուրեյի գենիթին, համակելով աշնան բնությունն ախորժ ու անգորը ջերմությամբ: Կի-բակի որվա տոնական տրամադրությունը հեր համապատասխանում իրենց զարդից մերկացող ծառ ու տունկի տխուր նիրհին, բանվորական նկուղների հույլ հորանջին:

Նեղ ձորի վերջարանում, մենավոր չինարու հովանու տակ կանգնել՝ գրուցում եյին միջին տարիքի յերկու բանվորներ, վորոնց դեմքի վրա չարքաշ կյանքը դրել եր իր խորունկ դրոշմը:

— Ժան, դանակը հասել է վոսկորին, ել դիմանալ, ել համբերել չեմ կարող: Կինս պառկած խսիրին, մեռնում ե վոչ ախքան ցավից, վորքան սովից: Յերեխաս կպչում ե նրա ցամաքած կրծքին, ծծում ե, ծծում ու յերբ վոչինչ չի գալիս բերանը, գայբացած սկսում ե լալ և իր թաթիկներով ծեծել սովամաշ մոր կուշ յեկած դատարկ ծծերը...

— Ճիշտ ե այդ բոլորը, Շարլ. ծանր, շատ ե ծանր մեր դրությունը, բայց ի՞նչ կարող ենք անել: Ամեն մութ աեղ լույս տվող, ամեն փակ դուռ բացող վոսկին պատկանում ե դը-Կոնտին: Իշխանությունը հովանավորում ե նրան, իշխանավորները հավատարիմ շներին նման պաշտպանում են նրան: Մենք սև ենք, նա՝ սպիտակ. մենք մեղավոր ենք, նա՝ անմեղ. մենք պիտի տանջվենք, նա՝ հանգիստ ապրի. մենք պիտի աշխատենք, նա՝ վայելի: Ո՛ւր գնաս, հում պատմես ցավդ:

— Սպիտակ դղյակ, դը-Կոնտին:

— Շատերն են փորձել այդ ճամբան, Շարլ, բայց իզուր: Ինչպես չի կարող անթրոցը*) կանաչել, ծաղկել, այնպես ել ծաղկել, պտուղ տալ չի կարող դը-Կոնտը:

— Նրա ծաղկելն իր գլխին գիպչի: Նրան յես

*) Թոնրի կրակը խառնելու փայտե ձող:

պիտի առեմ, թե ի՞նչ սև ուր ենք ապրում մենք ամենքս, երբ նա լողում ե բավականությունները ծովում: Նա պարտավոր ե հոգ տանել մեր ապրուստի, մեր կյանքի մասին, վորպեսզի մենք չռչնչանանք աշնան ճանձների պես: Բացի այդ, յես պիտի սլահանջեմ, վոր նա իր բազմաթիվ կովերից մեկը տա ինձ և Ռոլանին, վորի կինը մի շաբաթ առաջ մեռավ ծննդաբերությունից, թողնելով նրան վատառողջ մի աղջիկ:

— Քո պահանջը կըպայթի գլխիդ իբրև կայծակ, վորովհետև, նախ՝ դը-Կոնտը հրեշ ե առանց խղճի կաթիլի. յերկրորդ՝ դը-Կոնտն անցյալ վողջ գիշերը քեֆ ե արել, վորից հետո յերկու-յերեք ուր նա մթնտում ե գարնան կարկտաբեր ամպի նման, և վսյ նրան, ով այդ ժամերին կերևա գինուց պղտոր՝ նրա աչքերին:

— Այո, վսյ մեզ, վոր հլու յեղան պես, միայն վիզ ենք ծռում դը-Կոնտերի անարգ լծի տակ, վորոնք և՛ այսօր, և՛ վաղը, և՛ հավիտյան նույնն են միշտ — դաժան հարստահարիչ, ուրիշ վոչինչ: Սակայն դը-Կոնտը յեթե այսօր դժոխք դառնա՝ դժոխքի բոլոր սարսափներով, յես զարձյալ չեմ վարանի, չեմ տատանվի, յես կերթամ այդ դժոխքը ցնցող խոսքեր ասելու նրան, — վճռական հայտարարեց Շարլն ու շտապ գնաց դեպի Սպիտակ դղյակը:

* *

Արևադարձային փարթամ բույսերի ու ծաղիկների մեջ թաղված, կոբր վերանգալում գրկոնան այդ ժամին դոմինս յեր խաղում կարգինալ Մասալիոնի հետ: Սա Փարիզից հյուր երյեկել իր վաղեմի բարեկամին և կեր ու խումի, շվայտության անքուն գիշերներ եր լուսացնում նրա ընկերակցությամբ, զոռ տալով Բորդո-Շամպայնի ընտիր խմիչքներին:

Դը-Կոնան, անհանգիստ նժույգի ջղային ընազդով, հանկարծ նայեց պարտիզին և նկատեց այնտեղ բոկոտան, մետակ շապկով մեկին, վորի խղճուկ տեսքը կարծես վիրավորում եր շրջապատի շքեղությունը: Անձանոթը սակայն, ուրվականի մունջ անզգայությամբ, վոչ մի բանի վրա ուշք չգարձներով, ուղղակի դիմում եր վերանդա: Մինչ գարմանքից ապուշ կտրած գործարանատերը կրպարդեր իրեն, թե վոնց և վորտեղից ներս պրծավ այս կեղտոտ շրջմուլին, սա արձանացավ նրա դիմաց, իբրև շուրջը տիրող փարթամության կենդանի հանդիմանություն:

Տարակուսանքից և զայրույթից այլայլված դը-Կոնտը հարցական իր հայացքն ուղղեց տաբորինակ այցելուին, սպասելով պատասխանի:

— Տեր, սկսեց անկոչյեկվորը — մեր ծանոթ Շարլը, իմ ընկեր բանվորների կողմից յես յեկել

եմ հայտնելու քեզ, վոր կարիքը հեքիաթային վիշապի նման կլանում ե մեզ, վոր համբերելույել տեղ չկա, վոր...

— Մեզ համբերության սովորեցնելու համար՝ յերկինքն աշխարհ ուղարկեց իր միածին վորդուն, վորը համբերությամբ տարավ մարդկանց բոլոր անարգանքները՝ մինչև Գողգոթայի խաչելությունը, — ընդհատեց նրան կարգինալը, ապա հանդիսավոր ավելացրեց. «ծառաներ, հնազանդ յեղեք ձեր տերերին»

— Յերկնքի սովորեցրած հնազանդությունը և համբերությունը մենք թողնում ենք ձեզ, իսկ մեր հարստահարիչներից մենք պահանջում ենք, վորպեսզի...

Շարլը չկարողացավ ավարտել իր խոսքը. գազազած դը-Կոնտը վեր թռավ տեղից և գոռալով — «դո՛ւրս, դո՛ւրս կորիր, հանդուգն անզգամ», — ուժգին հրեց նրան, իր ճարպակալած բուռնցքով խփելով նրա ծոծրակին:

Շարլն ամբողջ թափով գարնվեց վերանդայի վոսկեգոծ սյունի միջին գրվազին, և տաք արյունը լայն ճեղքված նրա ճակատից կարմիր կայլակներով թափվեց բաց կրծքին, կտավե սպիտակ շապկին: Սաստիկ ընդհարումից Շարլի աչքերը պեծին տվին, մթնեցին, և նա, առանց հաշիվ տալու իր արածին, հետ դարձավ ու վորքան ույծումը կար, շեշտակի մի ապտակ քաշեց

դը-Կոնստի կարմրկտած դեմքին: Գործարանատի-
րոջ հաղթ մարմինը, հողմահար կաղնու նման,
խրար յեկավ, ճոճվեց, բայց պահեց իր հավասա-
րակշիռը, վայր չընկավ: Դը-Կոնստը մոլեգնած
վագրի արագութեամբ մերկացրեց սպանական իր
կեռ դաշույնը և այն՝ շեշտակի մխեց Շարլի սիր-
տը, վոր վայրկենապես դադարեց բաբախելուց:
Մարդասպանն ամբողջ թոքերով փռնչաց, զըզ-
վանքով թքեց լճացած արյան մեջ կոլոված դիա-
կին, իսկ կարգինալն անվրդով հանգստութեամբ
արտասանեց.

— Շանը՝ շան վախճան...

— Հետո՞, հայրիկ, հետո՞, անհամբերութեամբ
վրա բերեց Վիկտորը, փողջ ելութեամբ ելեք-
տրականացած:

— Կատարված փոճրի լուրը բուպեապես տա-
րածվեց դը-Կոնստին պատկանող շրջակա գյուղե-
րը, փորտեղից իսկույն, փոջ պակաս ծանր հարս-
տահարված աշխատավորութիւնը, շարան-շարան
գիւմեց դեպի մետաքսի գործարանը, ուր հավաք-
վել ելին բանվորները՝ թողելու իրենց դժբախտ
ընկերոջը

Յերբ նրան մերկացրին՝ մարմինը լվանալու
համար, մի ջահել բանվորուհի, գործարանում
ամենքից սիրված խաժակն, փոսկեծամ գեղեցիկ
Լուիզան, վերցրեց Շարլի արյունով կարմիր ներկ-

ված շապիկը և բարձրանալով տեղում գտնված
մեծ քարի վրա, այսպես խոսեց.

— Ընկերներ, դադանը մի անգամ արյան
համն առնելուց հետո դառնում է ավելի կատա-
ղի ու անգուսպ, յեթե նրա ժանիքները չեն
ջարդվի նրա հրեշալին գլխի հետ: Դը-Կոնստին
անպատիժ թողնել, նշանակում է մեր ձեռքով
մեր մահվան դատավճիռն ստորագրել այսուհե-
տե: Շարլը խոսելով մեր անունից և զոհվելով
մեզ համար, ապացուցեց, վոր խաղաղ ճանա-
պարհով մենք մեր դրութիւնը լավացնել, տար-
րական ազատութեան մասին յերազել անգամ
չենք կարող: Շարլն իր արյունով գծեց այն
միակ ուղին, վորով պիտի գնանք մենք, յեթե
ուզում ենք վերջ գնել մեր ստրկութեանը, մեր
անասնական դրութեանը: Դա պայքարի, դա կռի-
վարմիւր ուղին է: Թող արյունով ներկված այս
շապիկը դառնա մեր կռիւի խորհրդանշանը, մեր
Կարմիր Դրոշը, վորը պիտի առաջնորդի մեզ դե-
պի ազատութեան, դեպի մեր ազատ կյանքի
կարմիր արշալույսը:

Լուիզան գլխից բարձր, ոգի մեջ ճոճեց ձեռ-
քի շապիկը և գոչեց.

— Ով տղամարդ է ու նամուս ունի, ում
կրճքում զարկում է մարդկային ազնիւ սիրտ,
ազատութեան և ընկերսիրութեան զգացումով

խիզախ սիրտ, դեպի Սպիտակ գոյակ, դեպի գր-
կոնտր, դեպի վրեժ...

«Դեպի վրեժ, դեպի գր-կոնտր, վրեժ, վրեժ»,
— փոթորկի պես թնդաց հարյուրավոր բանվոր-
բարվորենների ու հազարավոր գյուղացիների
բազմությունը և արիք տվեց, տարն ի վեր ծա-
վալվեց դեպի Սպիտակ գոյակը: Ամբոխի առա-
ջից, թթենու գեղնաթոն փայտի ծայրին փող-
փողում եր Շարլի արյունոտ շապիկը, համայն
աշխարհի պրոլետարների այսորվա կարմիր Դրոշը:

Մի քանի բուլեյի ընթացքում բոցերի հրե-
ղեն լեզուների մեջ սկսեց տրաքտրաքել, ճրճր-
թալ Սպիտակ գոյակը, շռայլության, գեխության
ու վռճիրների այդ դիվային վորջը:

Դր-կոնտոն իր հավատարիմ ծառաների գի-
նակցությամբ փորձեց գիմադրել, պաշտպանվել,
սակայն զազազած բանվորներն ու գյուղացիք,
իններորդ արիքի ուժգնությամբ, տրորեցին նրան
իրենց վտանների տակ և ձգեցին թանձր ծխի սև
ժխորը...

Իր կաշին փրկեց միայն կարգինալ Մասսի-
լիոնը, վորը լսելով գործարանի շուրջը հնչող
խռովահույզ աղմուկը, գուշակեց գլխին գալիքը,
ձի նստեց ու փախավ դեպի Լիոն, գուր համո-
ղելով ինքնավստահ գործարանատիրոջը — հետևել
իր որինակին:

— Հետո, հետո ի՞նչ յեղավ, — հույզից դող-
դոջուն ձայնով հարցրեց Վիկտորը:

— Հետո... Լիոնից յեկած վոստիկաններն ու
գորքերը ձեռքակալեցին մետաքսի գործարանի
«լմբոստ» բանվորներին, դր-կոնտի «խռովարար»
գյուղացիներին, վորոնցից շատերն ընկան հրա-
յանագարի, իսկ շատերն ել փթեցին, մեռան
Լիոնի մոտ ռ խոնավ բանտերում» — ավար-
տեց ընթերցումը Զուբաբովը, ապա հուսալից
շեշտով ավելացրեց.

— Սակայն չմեռավ նրանց գծած պրոլետարա-
կան կռվի գաղափարը. չմեռավ նրանց պարզած
կարմիր Դրոշը, պրոլետարիատի հաղթանակի
հուսարեք սիմվոլը:

Այնուհետև գուր գիտես, վոր պատմության
մեջ հաճախ ե այդ դրոշն առաջնորդել մարդկա-
յին կեղեքված դասակարգը դեպի հեղափոխական
կռիվ, բայց անհաջող: Հիշիր Ֆեանսիական Մեծ
Հեղափոխությունը, վորը վերջացավ Բոնապար-
տի մարդաջինջ կայսրությամբ: Հիշիր Ավստրո-
Գերման աշխատավորների 1848 թվի ընդվզումը,
վորը ջախջախեցին յունկերական Պրուսիան ու
ցարական Ռուսիան: Հիշիր Փարիզի Կոմմունան,
վորը տասնյակ հազարավոր կոմմունարների ու
բանվորների արյան մեջ խեղդեցին Ֆրանս-գեր-
մանական զրահապատ բուռնցքի միացյալ զորա-
բանակները:

Անշուշտ, այդքան բյուր բյուրավոր զոհերի
արյունով վռնոգված դասակարգային հեղափո-
խության գաղափարն ու առողջ սերմերը չեյին
կարող անհետ կորչել. և նրանք ծլեցին, աննման
պտուղներ տվին Հոկտեմբերյան Հեղափոխության
ժամանակ, յերբ յեվրոպական իմպերիալիզմն ան-
կարող յեղավ ռուսական պրոլետարիատի ջուռ
ձեռքից խլել նրա պարզած Կարմիր Դրոշմը:

Այսօր այդ պանծալի գրոշը ծածանվում և
յերկրագնդի մի վեցյերորդ մասի վրա. հեռու
չե այն որը, յերբ նա կրփողփողի մեր մոլո-
րակի բոլոր անկյուններում:

Այդ աներկրա գիտակցությունը թող ույժ
տա քո վրձինին՝ ձեր գրոշի վրա նկարելու, որի-
գինալի վեհությանը համապատասխան գծերով,
այն Մեծ Հեղափոխականին, վորը իրեն հենակետ
ընտրելով դասակարգային պայքարը, շուռ տվեց
յերկրագունդն իր անիրավ կարգերով ու փթած
հասկացողություններով...

Լեզենդի՝ և հոր խոսքերի տպավորության
տակ, պատանի Վիկտորի յերևակայությունն ար-
դեն կազմել, փոտի յեր հանել միլիոնավոր պրո-
լետարների մի կուռ բանակ, վորի առաջից
խրոխտ քայլում եր ինքը, ձեռքում բարձր
բռնած Կարմիր Դրոշմը, գլուխ տալու բուր-
ժուազիայի միջնաբերդի վրա, որ հասական վեր-
ջին հարվածը հասցնելու նրանք:



«Ազգային գրադարան»



NL0322774

ԳԻՆԸ — 20 ԿՈՊ.

1
2

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Նեռի ծնունդը — պատմվածք:
2. Անուան կայծր »
3. Կուսկունիս եւ յես »

.....

ՎրիժՍկ — ԵՋ Ե, ասոյ յերրորդ վերեւոյ, տպւած և
անտաքերութեան պէտք և լինի արտաքերութեան:

Հեղինակի հասցեն՝ Թիֆլիս, Մախարաձէի փող. № 11.